ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի 2017թ.սեպտեմբերի 12-ի նիստի

2017 թվականի սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Արագածոտնի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստը, որը հանձնաժողովի նախագահ, մարզպետ Ա. Սիմոնյանի հանձնարարությամբ վարեց մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Հր. Գևորգյանը:

Հանձնաժողովի նիստին հարգելի պատճառով բացակայում էր միայն <<Կանթեղ Արագածի>> հասարակական կազմակերպության նախագահ Ա. Պապիկյանը:

Օրակարգում քննարկվեցին երկու հարց.

1.ՀՀ Արագածոտնի մարզի կրթական, մշակութային, սոցիալական, մարզական և առողջապահական նշանակության շենքերի մուտքերի մատչելիության ապահովման, հաշմանդամություն ունեցող անձանց, բնակչության սակավաշարժ խմբերի համար ազատ տեղաշարժման նպատակով թեքահարթակների կառուցման, հիմնանորոգման և կառուցման ընթացքում սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների:/Զեկուցումը կցվում է:/

2. Մարզում հաշմանդամություն ունեցող երեխաներին կրթության մեջ ներառման, ոլորտում առկա խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող քայլերի մասին /Զեկուցումը կցվում է/

Առաջին հարցի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ ՀՀ Արագածոտնի մարզպեպարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Դավայանը: Ներկայացվեց, որ մարզի կրթական,սոցիալական, մշակութային, մարզական, առողջապահական նշանակության շենքերից 18 տոկոսի մուտքը մատչելի է հաշմանդամություն ունեցողների համար: Վարչության մասնագետների կողմից մշակվել են թեքահարթակների կառուցման համար նախագծերի տարբերակներ: Մարզի բոլոր համայնքապետերին հանձնարարվել է նոր կառուցվող և հիմնանորոգվող շենքերի նախագծային առաջադրանքները պարտադիր տրամադրել բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:

Երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի կրթության , մշակույթի և սպորտի քաղաքաշինության վարչության պետ Մամիկոն Աբգարյանը:Նա նշեց, որ մարզում կան

հաշմանդամություն ունեցող 381 երեխա, որից 313-ը ընդրկված են դպրոցական ուսուցման մեջ: Մարզում կա 5 ներառական դպրոց, որոնցում ներառված են 103 վկայագրված աշակերտներ,իսկ գործող 1 հատուկ դպրոցում՝ 44-ը:Առողջական ծանր խնդիրների պատճառով կրթությունից դուրս են մնացել 8 երեխա, 4-ի համար տնային ուսուցում կկազմակերպվեն:
Զեկուցողները պատասխանեցին հանձնաժողովի անդամների հարցերին, բարձրացրեցին հարցեր չլուծված հիմնախնդիրների վերաբերյալ:

Աշխատակազմի ղեկավար պ-ն Հր. Գևորգյանն ամփոփեց նիստի աշխատանքները, տրվեց հանձնարարություն հաշմանդամություն ունեցող մարզի սոցիալապես անապահով ընտանիքների կարիքները պարբերաբար գնահատել, ներկայացնել մարզպետին՝ համապատասխան աջակցություն ցույց տալու համար:Կարևորելով տեղական ինքնակառավարման մարմինների դերը հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքում ներառելու գործում, հանձնարարվեց մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչությանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով վեր հանել ոլորտում առկա հիմնախնդիրները և ներկայացնել մարզային հանձնաժողովի քննարկմանը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Գ.Գյոզալյանի հանձնարարությամբ նիստը վարում էր ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ տիկին Ն.Մովսիսյանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի բոլոր անդամները:

Օրակարգ

1. ՄԱԿ-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ>> կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջների կատարման ուղղությամբ ՀՀ Արագածոտնի մարզում 2013-16 թվականների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների մասին

/Զեկ. հանձն. Քարտուղար Գ. Դանիելյան/

Զեկուցողը նշեց, որ մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումները, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները իրազեկված են ՄԱԿ-ի <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ>> կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին, 8-րդ , 9-րդ, 20 հոդվածի բ) կետով, 24-րդ, 26-րդ, 28 հոդվածներով նախատեսված պահանջների համաձայն մարզում աշխատանքներ են իրականացնելու, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով աշխատանքներ իրականացնելու մասին:

ՀՀ Արագածոտնի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովը հրավիրել է տարեկան 4 նիստ, որտեղ քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական վերականգնողական-տեխնիկական միջոցներ տրամադրելու, համայնքներում տեղաշարժման համար մատչելի պայմաններ ապահովելու, աշխատատեղեր ստեղծելու, հաշմանդամություն ունեցող երեխաներին կրթության մեջ ներառելու, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ կազմակերպելու մասին հարցեր:

Մարզային 4 թերթերում հաշմանդամություն ունեցող անձանց թեմաներով հրապարակվել են նյութեր:Մարզային հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

Առողջական խնդիրների պատճառով կրթությունից դուրս մնացած երեխաներին աջակցելու նպատակով նրանց ծնողների հետ տարվում են խորհրդատվական, բացատրական և սոցիալական աջակցության աշխատանքներ: Բնակչության համար պարբերաբար կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ, այդ գործընթացին ներառել են նաև հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

Կարևորվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ստեղծումը: ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 2015թ. առաջարկել է <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ իրականացվող Նորաշենի մանկապարտեզի և Աշտարակի մարզադպրոցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարել փոփոխություն՝ թեքահարթակների կառուցման համար: Թեքահարթակներ են կառուցվել կրթական 11 հաստատությունների, հասարակական նշանակության 18 շենքերի մուտքերի մոտ, որոնք մատչելի են դարձրել հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը:

Անձնական շարժունակությանը նպաստելու նպատակով /20 հոդված, բ) կետ/ 2013-16թթ ընթացքում համագործակցելով պետական, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց

աջակցություն է ցուցաբերվել բժշկական վերականգնողական տեխնիկական պարագաներ ստանալու հարցում: Մարզում այդ ժամանակամիջոցում ստացել են 258 սայլակ, 54 քայլակ, հենակներ, ձեռնափայտեր,250 օրթոպեդիկ կոշիկներ, 40 լսողական սարքեր:

Առողջական խնդիրների պատճառով կրթությունից դուրս մնացած երեխաներին աջակցելու նպատակով նրանց ծնողների հետ տարվում են խորհրդատվական, հոգեբանական և սոցիալական աջակցության աշխատանքներ: Դրանց արդյունքում մանկուց հաշմանդամություն ունեցող երեխաները պարբերաբար վերականգնողական բուժում են ստանում Օշականի, Նորագյուղի, նաև Կոշի մանկական վերականգնողական կենտրոններում: Այլընտրանքային բուժման համար նոր հնարավորություններ ունեն Աշտարակ քաղաքում և Ուշի գյուղում գործող ձիաբուժարանները:

Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կրթությունը մատչելի դարձնելու ուղղությամբ դեռևս կան չլուծված հարցեր:

Մարզի հանրակրթական հաստատություններում դեռևս չի արմատավորվում հոգեբան, սոցիալական աշխատող, լոգոպեդ կամ հատուկ մանկավարժ մասնագետ ունենալու հարցը: Մարզի ընդամենը 4 հանրակրթական դպրոցներում աշխատանքի են ընդունվել 9 հոգեբան և 4 լոգոպեդ:

ՄԱԿ-ի կոնվենցիայի 26 հոդվածի պահանջների կատարման ուղղությամբ մշտապես աշխատանքներ են տարվել հաշմանդամություն ունեցող անձանց բուժման և վերականգնման ուղղությամբ:

“Անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերում” ընդգրկված հաշմանդամություն ունեցող անձանց կողմից անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքից՝ ըստ դիմելիության, օգտվել են հաշմանդություն ունեցող անձինք: Առողջարանային, վերականգնողական բուժումներ ստանալու համար ուղեգրեր են տրամադրվել 167 անձանց, որից 13-ը՝ երեխաներ, բուժման համար ուղեգրեր են տրամադրվել 2453 անձի, որից 113-ը՝ երեխա:

Իրականացվել են հաշմանդամների զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր/27 հոդված/՝ մասնագիտական ուսուցում, աշխատավարձի փոխհատուցում, աշխատատեղի հարմարեցում՝ 2 ծրագիր: 8 տղամարդ ընդգրկվել է ակտիվ ծրագրերում, 30 անձ տեղավորվել է սեզոնային աշխատանքներում:

<< Seyf dy childrn>> կազմակերպության <<Լայֆ>> ծրագրի շրջանակներում <<ՈՒնիսոն>> կազմակերպությունը Աշտարակ քաղաքում իրականացրել է հանշամդամություն ունեցող անձանց համար համակարգչային ուսուցում, աշխատաշուկայում մրցունակությանն աջակցելու դասընթացներ:

Սոցիալական պաշտպանության խնդիրները/հոդված 28/ մշտապես կարևորվեն են: Ամեն տարի հաշմանդամություն ունեցող անձանց դրամական աջակցություն է ցուցաբերվում մարզպետի կողմից: Այս տարիների ընթացքում դրամական աջակցություն է ստացել 986 անձ: Հաշմանդամների սոցիալական սպասարկման ծրագրերի արդյունքում տրամադրվել է հագուստ, կոշիկ, հողաթափ, սնունդ:

Չորս ընտանիքների, որոնք ունեն հաշմանդամություն ունեցող անձ, բնակարանի վերանորոգման համար նյութական օգնություն է տրվել: Աշտարակ քաղաքի բնակիչ, մանկուց հաշմանդամ Շուշանիկ Հովակիմյանի ընտանիքը ՀՀ առաջին տիկնոջ աջակցությամբ ստացել է 3 սենյականոց բնակարան: Արագած համայնքից հաշմանդամներից բաղկացած Մանուկյանների և Կարապետյանների ընտանիքներին ցուցաբերվել է նյութական աջակցություն: Կարապետյանների բնակարանի կառուցման հարցը լուծվել է <<Տիրամայր Հայաստանի>> կազմակերպության միջոցով:Համայնքի և բարեգործական կազմակերպությունների աջակցությամբ բնակարաններ են կառուցվել 3 ընտանիքների համար Նոր Արթիկ, Շղարշիկ, Մելիքգուղ համայնքներում:

2015 թվականին <<Զանգակատուն>> հասարակական կազմակերպությունը Աշտարակ քաղաքում բացել է սոցիալական աջակցության կենտրոն,որի շահառուների մոտ 30%-ը հաշմանդամություն ունեցող անձիք են և նրանց ընտանիքների երեխաները:

Կարևորվել է քաղաքական ու հասարակական կյանքին մասնակցության հարցը /հոդված 29/: Մարզում գործում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական 7 կազմակերպություն:

Որոշվեց

1.Զեկուցման հիմնական դրույթներին հավանություն տալ և առաջարկել այն ներկայացնել ՀՀ ԱՍՀ նախարարություն, ազգային հանձնաժողովին:

2.Առաջարկել տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին հնարավոր միջոցառումներ իրականացնել տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար համապատասխան պայմաններ ստեղծել:

3.Պ-ն Դավայանին՝ հետևել շինարարական նոր նախագծերում, հիմնանորոգման ծրագրերում ներառելու թեքահարթակների, հարմարեցված սանհանգույցների աշխատանքների կատարմանը:

2.2016թ. հաշմանդամների համար հավասար հնարավորություններ տարի հայտարարելու կապակցությամբ մշակված մարզային միջոցառումների ծրագրի մասին

/Զեկուցող՝ հանձնաժողովի անդամ Ա.Մովսիսյան/

Հանձնաժողովի անդամ, մարզպետարանի առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մովսիսյանը ներկայացրեց 2016թ հաշմանդամների համար հավասար հնարավորություններ տարի հայտարարելու կապակցությամբ մշակված մարզային միջոցառումների ծրագիրը:Նշվեց, որ ծրագրի վրա հիմնականում աշխատել են մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետները, ներգրավվել են նաև տվյալներ կրթության ,մշակույթի և սպորտի,քաղաքաշինության վարչությունների, հասարակական կազմակերպությունների կողմից ստացված առաջարկությունները:

Ելույթներով հանդես եկան Ս.Թադևոսյանը,Ս. Պետրոսյանը, Ա.Դավայանը:

Հանձնարարվեց՝

1. Մարզպետարանիաշխատակազմի քաշաքաշինության վարչության պետ պ-ն Ա.Դավայանին՝
   Հետևողական աշխատանքներ տանել մարզի կրթական, առողջապահական, մշակութային և սոցիալական պաշտպանության շենքերի մուտքերը մատչելի դարձնելու տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար, նրանց համար ապահովել հավասար պայմաններ:
2. Ա. Պետրոսյանին,տ-ին Գ.Դանիելյանին, Հ.Նազարյանին՝ աշխատանքներ իրականացնել մարզի դպրոցներում ներառական կրթության ընդլայնման նպատակով:

3.Հանձնարարել տ-ին Դանիելյանին՝ հետևել միջոցառումների ծրագրի իրականացմանը, առաջին կիսամյակի արդյունքները ներկայացնել հանձնաժողովի քննարկմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գյոզալյան

Քարտուղար՝ Գ.Դանիելյան